Աշխատանքի ծածկագիր 2045

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ք. Երևան 18.01.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ս. Սահակյանի
մասնակցությամբ անդամներ՝
Լ. Գրիգորյանի
Վ. Դալլաքյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով ենթաբաժինն արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Տ

Բողոքարկվել են քաղաքացիական դատավարություն բաժնի 18-րդ, 30-րդ, 4-րդ հարցերը:

Քաղաքացիական դատավարության բաժին

Հարց 18

Հարցը հստակ է, իսկ պատասխանն ուղղակիորեն բխում է ՔԴՕ 255-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումներից, որով խնամակալության և հոգաբարձության մարմնին գործունակ ճանաչելու դիմում ներկայացնելու իրավասություն տրված չէ, այլ տրված է այդ թվում խնամակալին: Մաիվորը վերանայման ենթակա չէ:

Հարց 30

Հանձնաժողովը գտնում է, որ հարցի նման ձևակերպման պայմաններում ենթադրելի չորս պատասխանները չեն բխում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքից, այլ ընդհակառակը՝ ըստ նույն օրենսգրքի 194-րդ հոդվածի 1-ին մասի 5-

րդ կետի բացառվում հարցադրմամբ ներկայացված իրավիճակի առկայությունը, քանի որ օրենսդիրը պարտադիր է համարում նշել յուրաքանչյուր պատասխանողի պարտավորության չափը կամ պատասխանատվության համապարտությունը: Այսինքն, դատարանի կողմից նման վճիռ կայացվելու դեպքում, հնարավոր չէ ենթադրություններով եզրահանգում կատարել պատասխանատվության տեսակի վերաբերյալ: Ուստի, հարցի թերի ձևակերպման պայմաններում, հարցին տրված պատասխանը պետք է համարել ճիշտ:

Հարց 4

Միավորը ենթակա չէ վերանայման, քանի որ ՔԴՕ 27-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է վերաքննիչ դատարանի կողմից միանձնյա քննության ենթակա դատական ակտերի վերանայումը, որոնց թվում է նաև պարզեցված վարույթի կարգով կայացված եզրափակիչ դատական ակտը:

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 2045 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը մասնակիորեն բավարարել: Քաղաքացիական դատավարության բաժնի 30-րդ հարցի պատասխանը գնահատել 1 միավոր, իսկ բողոքը մնացած մասով մերժել:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս.ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Վ. ԴԱԼԼԱՔՅԱՆ